ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ
2022-2023

www.elections.am

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ

www. elections.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2022 ԹՎԱԿԱՆ 6

1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2022թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6

1. 2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 8

1.3. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ 9

1.4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ 2022թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 10

1.5. ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2022 ԹՎԱԿԱՆ) 16

1.6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ - 2022 ԹՎԱԿԱՆ 25

2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2023 ԹՎԱԿԱՆ 30

2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2023թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 30

2.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 32

2.3. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 33

2.4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ 2023թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 34

2.5. ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2023 ԹՎԱԿԱՆ) 40

2.6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ - 2023 ԹՎԱԿԱՆ 55

3. ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64

3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64

3.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 69

3.3. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 71

3.4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 75

3.5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ 87

4. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ 88

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ 92

6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ 94

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաքելությունն է կազմակերպել Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել դրանց օրինականության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դերի ամրապնդման և գործունեության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի ամրագրումը, համաձայն որի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության մասին, իսկ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 132-րդ հոդվածի համաձայն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր երկրորդ տարվա ապրիլի 1-ը, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրություններից հետո՝ մեկամսյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաղորդում»:

Հարկ է նշել, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործող կազմն իր լիազորությունները ստանձնել է 2022 թվականի հոկտեմբերի 12-ին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն Ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ կազմավորել է Հայաստանի Հանրապետությունում մշտական հիմունքներով գործող ընդհանուր թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ 10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ հանրապետության մարզերում և նույն հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետներում՝ 2022 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունել է թիվ 89-Ա որոշումը «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու և անդամներ նշանակելու մասին»:

2022-2023 թվականների ընթացքում, Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, կազմակերպվել և անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ Հայաստանի Հանրապետության 24 համայնքներում, որոնցից 21-ում՝ տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով ընտրություններ, իսկ 3 համայնքներում՝ մեծամասնական ընտրակարգով ընտրություններ:

2023 թվականին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան ստուգել է մեկ քաղաքացիական նախաձեռնության կողմից՝ Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով ստեղծված նախաձեռնող խմբի կողմից հավաքված ստորագրությունների վավերականությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ներդրել է մի շարք գործիքներ՝ հաշմանդամության տարբեր խնդիրներ ունեցող անձանց ընտրական իրավունքն իրացնելու նպատակով, ընդունել է համապատասխան իրավական ակտեր և սահմանել դրանց իրացման համար անհրաժեշտ ընթացակարգեր:

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2022 ԹՎԱԿԱՆ

1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2022թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրություններ կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 256-Ա որոշմամբ 2022 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էր սահմանել 2022 թվականի մարտի 27-ը, հունիսի 5-ը և սեպտեմբերի 25-ը:

2022 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել Հանրապետության թվով 19 համայնքներում:

2022 թվականի մարտի 27-ին Արարատի մարզի Վեդի համայնքում անցկացվել են Վեդի համայնքի ավագանու ընտրություններ (ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 4-ի N 1-Ն որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու լիազորությունները և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում նշանակվել են ավագանու արտահերթ ընտրություններ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով):

2022 թվականի սեպտեմբերի 25-ին Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի թվով 17 համայնքներում անցկացվել են համամասնական ընտրակարգով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, իսկ մեկում՝ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի մեծամասնական ընտրակարգով ընտրություններ:

Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան 2022 թվականի մարտի 27-ի և սեպտեմբերի 25-ի ընտրությունների քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով կազմավորվել էր ընդհանուր թվով 342 ընտրական տեղամաս:

2022 թվականի մարտի 27-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2022 թվականի մարտի 27-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների

նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել: Սահմանված ժամկետում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներ չեն ստացվել: 2022 թվականի մարտի 27-ին կայացած Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու ընտրությունների շրջանակներում ձևավորված թվով 28 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից թվով 19 գրանցամատյաններում գրառումներ առկա չեն եղել, և թվով 9 գրանցամատյաններում առկա են եղել 10 գրառում: 2022 թվականի մարտի 27-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները դատական կարգով չեն բողոքարկվել:

2022 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքներում, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում, Լոռու մարզի Գյուլագարակ, Ալավերդի, Լոռի Բերդ և Տաշիր համայնքներում, Կոտայքի մարզի Չարենցավան, Ակունք, Բյուրեղավան, Ջրվեժ համայնքներում, Շիրակի մարզի Անի համայնքում, Սյունիքի մարզի Սիսիան և Քաջարան համայնքներում, Վայոց ձորի Արենի և Եղեգիս համայնքներում և Տավուշի մարզի Բերդ համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել: Թվով 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից երկու՝ թիվ 25 և թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում մինչև քվեարկության օրը ստացվել է մեկական դիմում, որոնցով հարուցվել են վարչական վարույթներ, կայացվել որոշումներ: Քվեարկության օրը տեղեկատվության հարցման վերաբերյալ մեկ դիմում է ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որին օրենքով սահմանված կարգով տրվել է պատասխան: Քվեարկությունից հետո թիվ 24, 27 և 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ ներկայացվել են ընդհանուր թվով 19 դիմում, որոնցից 1-ը՝ թվով 6 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով, որը դիմումատուն մեկ այլ դիմումով խնդրել է թողնել առանց քննության և վերադարձնել, ինչի հիմքով էլ նշված դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվել է, իսկ թվով 18 դիմումներով պահանջվել է վերահաշվարկել թվով 18 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները (թվով 12 դիմում ներկայացվել են թիվ 27 ԸԸՀ և թվով 6 դիմում՝ թիվ 38 ԸԸՀ): Բոլոր դիմումների հիմքով իրականացվել են համապատասխան ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ, որի արդյունքումում էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2022 թվականի սեպտեմբերի 25-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում ձևավորված թվով 314 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից թվով 276 գրանցամատյաններում գրառումներ առկա չեն եղել, և թվով 38 գրանցամատյաններում առկա է եղել 50 գրառում:

2022 թվականի սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները դատական կարգով չեն բողոքարկվել:

1. 2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

2022 թվականի ընթացքում կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում շարունակվել են կիրառվել տեխնիկական սարքավորումները, որոնց միջոցով իրականացվել է ընտրողների նույնականացումն ու գրանցումը:

2022 թվականի մարտի 27-ին և 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմավորված, ընդհանուր թվով 342 ընտրական տեղամասերում ընտրողների գրանցումն իրականացվել է ընդհանուր թվով 559 տեխնիկական սարքավորումների կիրառմամբ:

Տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքներն յուրաքանչյուր ընտրության համար իրականացվել են առանձին: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների կիրառումն ու սպասարկումն իրականացվել է բացառապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տեղական մասնագետների կողմից:

Մասնավորապես, իրականացվել են 2022 թվականի մարտ և սեպտեմբեր ամիսներին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ գործարկվող ավելի քան 600 տեխնիկական սարքավորումների ծրագրային ներբեռնման աշխատանքներ: Ստուգվել են շուրջ 200 անխափան սնուցման սարքավորումներ և 200 երթուղիչներ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին տրամադրվել են նաև լրացուցիչ տեխնիկական սարքավորումներ, անխափան սնուցման սարքավորումներ և երթուղիչներ՝ անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինումն ապահովելու համար:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 8 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ծրագրային ապահովմամբ կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա:

Ընդհանուր թվով 342 ընտրական տեղամասերից՝ 184 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել է մեկ տեխնիկական սարքավորում, իսկ թվով 158 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ՝ 99-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորում, 59-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից

յուրաքանչյուրով, բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

Ընդհանուր առմամբ գործածված թվով 559 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 12 սարքավորման հետ (2.1 %): Բոլոր խնդիրներն անմիջապես լուծում են ստացել և արդյունքում, քվեարկության օրը 342 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով: Բոլոր ընտրական տեղամասերում մինչ քվեարկության մեկնարկը տպվել են գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները, իսկ քվեարկության ավարտից հետո՝ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ:

1.3. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում և հրապարակում է ուսումնական նյութեր՝ ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար:

2022 թվականին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է ուղեցույց և ուսումնական ձեռնարկ (հուշաթերթ)՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար, ուղեցույց թույլ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրայլյան այբուբենով), քվեարկության կարգի և քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու համար: Մասնավորապես, նախապատրաստվել է քվեարկության կարգի, ինչպես նաև քվեարկության կարգը պարզաբանող հանրային իրազեկման թերթիկների տպագրությունը՝ խոշորացված տառատեսակով և բրայլյան գրով: Տեղամասային կենտրոններին տրամադրվել են հատուկ բրայլյան ստվարաթղթե կաղապարներ՝ նախատեսված քվեաթերթիկների համար, որոնք համամասնական ընտրակարգով

անցկացվող ընտրությունների ժամանակ ապահովում են ինքնուրույն քվեարկության իրականացումը, իսկ մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների ժամանակ տրամադրվել են խոշորացույցներ: Մատչելի տեղամասային կենտրոնների վրա փակցվել են մատչելիության վերաբերյալ համապատասխան տարբերանշաններ:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին:

1.4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ 2022թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզ	**Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ**	Համայնքի ղեկավար		Ավագանու անդամի		Համամասնական ընտրակարգով	
		Ընդամենը	**որից՝ արտա-հերթ**	**Ընդամենը**	**որից՝ արտա-հերթ**	**Ընդամենը**	**որից՝ արտա-հերթ**
Արագածոտն	3	1	0	1	0	2	0
Արարատ	1	0	0	0	0	1	1
Գեղարքունիք	1	0	0	0	0	1	0
Լոռի	4	0	0	0	0	4	0
Կոտայք	4	0	0	0	0	4	0
Շիրակ	1	0	0	0	0	1	0
Սյունիք	2	0	0	0	0	2	0
Վայոց ձոր	2	0	0	0	0	2	0
Տավուշ	1	0	0	0	0	1	0
Ընդամենը	**19**	**1**	**0**	**1**	**0**	**18**	**1**

Հերթական ընտրությունների օրերը	համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	համայնքի ղեկավար		ավագանու անդամի		համամասնական ընտրակարգով	
		ընդ.	որից՝ արտա-հերթ	ընդ.	որից՝ արտա-հերթ	ընդ.	որից՝ արտա-հերթ
27.03.2022	1	0	0	0	0	1	0
25.09.2022	18	1	0	1	0	17	0
Ընդամենը	19	1	0	1	0	18	0

Ընտրություններն ըստ մարզերի



2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ, ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Մարզ	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Տեղամասերի թիվը	Ընտրող-ների թիվը	Քվեարկության մասնակիցների թիվը	%
Արագածոտն	3	60	36534	18953	51.88
Արարատ	1	28	37069	23378	63.07
Գեղարքունիք	1	19	10833	5374	49.61
Լոռի	4	85	59215	28074	47.41
Կոտայք	4	38	50070	24984	49.90
Շիրակ	1	20	15917	7861	49.39
Սյունիք	2	49	29058	16621	57.20
Վայոց ձոր	2	21	12854	6502	50.58
Տավուշ	1	22	22503	11093	49.30
Ընդամենը	**19**	**342**	**274053**	**142840**	**52.12**





2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

	ընտրողներից՝ արական %	մասնակցել են %	ընտրողներից՝ իգական %	մասնակցել են %
Արագածոտն	49.85	51.95	50.15	51.63
Արարատ	50.67	61.19	49.33	64.86
Գեղարքունիք	51.28	48.15	48.72	51.14
Լոռի	52.75	50.29	47.25	44.06
Կոտայք	52.33	48.15	47.67	51.69
Շիրակ	50.31	53.83	49.69	44.79
Սյունիք	50.69	56.75	49.31	57.60
Վայոց ձոր	48.29	49.53	51.71	51.39
Տավուշ	51.61	51.12	48.39	47.30
Ընդամենը	51.28	52.39	48.72	51.72



2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ





ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	ՔՊԿ			ՀԱՅԱՍՏԱՆ			ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ		
	նախագահ	քարտուղար	անդամ	նախագահ	քարտուղար	անդամ	նախագահ	քարտուղար	անդամ
Արարատ	18	18	20	8	8	40	2	2	52
Արագածոտն	40	40	40	17	17	86	3	3	114
Գեղարքունիք	13	13	12	5	5	28	1	1	36
Լոռի	57	57	56	23	23	124	5	5	160
Կոտայք	25	25	26	11	11	54	2	2	72
Շիրակ	13	13	14	6	6	28	1	1	38
Սյունիք	32	32	34	13	13	72	4	4	90
Վայոց ձոր	14	14	14	5	5	32	2	2	38
Տավուշ	14	14	16	5	5	34	3	3	38
Ընդամենը	226	226	232	93	93	498[1]	23	23	638



[1] Տեղամասային ընտրական հանձնաժողովի 5 անդամի Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով նշանակել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ընդա-մենը	ներկայացուցիչների կամ դիտորդների թիվը	իգական	արական	18-35	35-50	50-65	65+
Զանգվածային լրատվության միջոց[2]	12	109	57	52	56	44	7	2
Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ԶԼՄ	6	102	42	60	42	51	8	1
Տեղական դիտորդ	5	278	160	118	199	60	17	2
Ընդամենը	23	489	259	230	297	155	32	5





[2] Զանգվածային լրատվամիջոցներից 5-ը՝ «168 Ժամ», «Factor.am», «News.am» լրատվական կայք, «Գործարար հայելի» թերթ, Yerkir.am լրատվական կայքէջ և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից 2-ը՝ Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն և Անկախ դիտորդ հասարակական դաշինք (համատեղ), հավատարմագրված են եղել 27.03.2022 և 25.09.2022թթ ընտրություններին

1.5. ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2022 ԹՎԱԿԱՆ)

2022 թվականի սեպտեմբերի 25-ին մեծամասնական ընտրակարգով ընտրություն անցկացվել է միայն մեկ համայնքում՝ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք: Նշված համայնքում անցկացվել են համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններ:

ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Մարզ	առաջադրված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արագածոտն	2	2	1
Ընդամենը	**2**	**2**	**1**



Ավագանու անդամների թեկնածուներ

Մարզ	առաջադրված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արագածոտն	14	14	9
Ընդամենը	**14**	**14**	**9**



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

Մարզ	առաջադրված		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	2	0	2	0	1	0
Ընդամենը	**2**	**0**	**2**	**0**	**1**	**0**



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

Մարզ	առաջադրված		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	14	0	14	0	9	0
Ընդամենը	**14**	**0**	**14**	**0**	**9**	**0**



Տեղեկատվություն համայնքի ղեկավարի թեկնածուների վերաբերյալ՝ ըստ տարիքի

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	0	0	1	0	1	1
Ընդամենը	0	0	1	0	1	1



Տեղեկատվություն ավագանու անդամի թեկնածուների վերաբերյալ՝ ըստ տարիքի

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	4	4	8	5	2	0
Ընդամենը	4	4	8	5	2	0



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Մարզ	համայնքների քանակը	Կուսակցու-թյունների կամ դաշինքների քանակը	ընտրական ցուցակներում առաջադրման ժամանակ ընդգրկված թեկնածուների քանակ
Արագածոտն	2	9	335
Արարատ	1	2	161
Արմավիր	0	0	0
Գեղարքունիք	1	1	44
Լոռի	4	11	412
Կոտայք	4	10	398
Շիրակ	1	3	147
Սյունիք	2	10	427
Վայոց ձոր	2	5	89
Տավուշ	1	3	150
Ընդամենը	18	54	2163





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2022Թ. ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Մարզ	համայնքների քանակը	Կուսակցու-թյունների կամ դաշինք-ների քանակը	ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների քանակը	գրանցված	որից՝ 2024 թ. դրությամբ				
					Ինքնա-բացարկ	մանդատը դադարած	Հետ է վերցրել փաստաթղթերը	Անվավեր	Մերժված
Արագածոտն	2	9	335	215	101	9	9	0	1
Արարատ	1	2	161	101	24	36	0	0	0
Արմավիր	0	0	0	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	1	1	44	28	2	0	14	0	0
Լոռի	4	11	412	358	31	21	0	0	2
Կոտայք	4	10	398	297	95	6	0	0	0
Շիրակ	1	3	147	147	0	0	0	0	0
Սյունիք	2	10	427	268	145	14	0	0	0
Վայոց ձոր	2	5	89	68	18	3	0	0	0
Տավուշ	1	3	150	140	6	2	2	0	0
Ընդամենը	**18**	**54**	**2163**	**1622**	**422**	**91**	**25**	**0**	**3**


Թեկնածուների քանակն ըստ մարզերի
17%
4%
0%
2%
20%
18%
6%
18%
9%
6%
Արագածոտն
Արարատ
Արմավիր
Գեղարքունիք
Լոռի
Կոտայք
Շիրակ
Սյունիք
Վայոց ձոր
Տավուշ


Մանդատը դադարած
Վայոց ձոր
3%
Տավուշ
2%
Արագածոտն
10%
Սյունիք
15%
Շիրակ
0%
Կոտայք
7%
Արարատ
40%
Լոռի
23%
Արմավիր
0%
Գեղարքունիք
0%

ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

2024թ. դրությամբ

Մարզ	Առաջին բաշխմամբ ընտրված		Ընտրական ցուցակներում գրանցված թեկնածուներ		Ընտրված		Մանդատը դադարած	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Արագածոտն	31	11	187	28	35	7	4	5
Արարատ	18	9	76	25	22	5	20	16
Արմավիր	0	0	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	19	2	26	2	19	2	0	0
Լոռի	50	28	228	130	52	26	14	7
Կոտայք	52	20	234	63	54	18	3	3
Շիրակ	14	7	98	49	14	7	0	0
Սյունիք	22	14	177	91	17	8	8	6
Վայոց ձոր	21	9	53	15	23	7	1	2
Տավուշ	13	8	90	50	13	8	2	0
Ընդամենը	***240***	***108***	***1169***	***453***	***249***	***88***	***52***	***39***









2022 թվականին տեղի ունեցած համամասնական ընտրակարգով անցկացված ավագանիների ընտրությունների արդյունքում ընտրված կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուներից մանդատ են ստացել 348-ը:

Հարկ է նկատել, որ 2022 թվականի ընթացքում Հայաստանի 61 համայնքների ավագանիների ընտրական ցուցակներում ընդգրկված անձանց կողմից ներկայացվել է ընդհանուր թվով 514 ինքնաբացարկի դիմում, որից 302-ը իգական սեռի ներկայացուցիչների կողմից, 212-ը՝ արական սեռի: Վաղաժամկետ դադարել է 194 ավագանու անդամի լիազորություն, որից 69 կին, 125 տղամարդ:

ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ

Մարզ	մինչև 35	որից՝ ընտրված	35-50	որից՝ ընտրված	50-65	որից՝ ընտրված	65 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	103	13	128	17	85	10	19	2
Արարատ	41	6	81	17	36	4	3	0
Արմավիր	0	0	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	8	2	21	14	12	5	3	0
Լոռի	106	14	167	44	109	18	30	2
Կոտայք	143	18	170	37	75	16	10	1
Շիրակ	46	5	59	9	34	6	8	1
Սյունիք	159	4	170	15	84	6	14	0
Վայոց ձոր	28	11	31	8	28	10	2	1
Տավուշ	56	4	46	10	45	7	3	0
Ընդամենը	690[3]	77	873[3]	171	508[3]	82	92[3]	7





[3] Ներառված են քվեարկություններին մասնակցած ընտրական ցուցակներով առաջադրված բոլոր թեկնածուները

1.6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ - 2022 ԹՎԱԿԱՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար 2022 թվականին հունիսի 13-ից մինչև հուլիսի 7-ը, կազմակերպվել և անցկացվել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստուգարքներ: Նշված դասընթացներին մասնակցելու համար ներկայացվել էր 3577 հայտ, որոնցից 1686-ը ներկայացվել էր կուսակցությունների կողմից, իսկ 1891-ը քաղաքացիների: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 2633 քաղաքացի, որոնցից 2378-ին ստուգարքի արդյունքում շնորհվել է որակավորման վկայական:

Ստորև ներկայացված են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպված մասնագիտական դասընթացների և ստուգարքների ամփոփ տվյալները:

2022թ. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կազմակերպված ընտրությունների անցկացման մասնագիտացված դասընթացների վերաբերյալ[4]

	Ընդամենը	մասնակցել են	%	ստուգված են ստացել	%-ը մասնակիցներից
Երևան	540	399	73.89	355	88.97
Արագածոտն	317	259	81.70	233	89.96
Արարատ	416	276	66.35	251	90.94
Արմավիր	354	249	70.34	226	90.76
Գեղարքունիք	280	188	67.14	167	88.83
Լոռի	437	342	78.26	316	92.40
Կոտայք	338	250	73.96	226	90.40
Շիրակ	453	343	75.72	299	87.17
Սյունիք	192	137	71.35	128	93.43
Վայոց Ձոր	84	66	78.57	58	87.88
Տավուշ	166	124	74.70	119	95.97
Ընդամենը	3577	2633	73.61	2378	90.32



[4] Տեղեկատվությունը ներկայացվում է ըստ դասընթացների անցկացման վայրերի



Տեղեկատվություն՝ ըստ հայտ ներկայացնողների

	Ընդամենը	մասնակցել են	%	ստուգված են ստացել	%-ը մասնակիցներից
Ըստ կուսակցությունների հայտերի	1686	1157	68.62	1020	88.16
Ըստ քաղաքացիների դիմումների	1891	1476	78.05	1358	92.01
Ընդամենը	**3577**	**2633**	**73.61**	**2378**	**90.32**



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հայտատու	Ընդամենը	մասնակ-ցել են	%	ստացել են ստուգված	%-ը մասնա-կիցներից
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	593	406	68.47	344	84.73
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	1	50.00	1	100.00
ՀԱՅՐԵՆԻՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	106	80	75.47	72	90.00
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	644	439	68.17	400	91.12
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	341	231	67.74	203	87.88
ԸՆԴԱՄԵՆՆ ԸՍՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ	**1686**	**1157**	**68.62**	**1020**	**88.16**



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

Արական սեռի դիմումատուներ

	Ընդամենը	մասնակցել են	%	ստացել են ստուգված	%-ը մասնակիցներից
Երևան	147	86	58.50	77	89.53
Արագածոտն	141	109	77.30	97	88.99
Արարատ	180	110	61.11	98	89.09
Արմավիր	122	77	63.11	72	93.51
Գեղարքունիք	155	86	55.48	74	86.05
Լոռի	128	90	70.31	78	86.67
Կոտայք	118	79	66.95	76	96.20
Շիրակ	144	91	63.19	77	84.62
Սյունիք	61	35	57.38	33	94.29
Վայոց ձոր	33	24	72.73	22	91.67
Տավուշ	40	28	70.00	28	100.00
Ընդամենը	1269	815	64.22	732	89.82

Իգական սեռի դիմումատուներ

	Ընդամենը	մասնակցել են	%	ստացել են ստուգված	%-ը մասնակիցների g
Երևան	393	313	79.64	278	88.82
Արագածոտն	176	150	85.23	136	90.67
Արարատ	236	166	70.34	153	92.17
Արմավիր	232	172	74.14	154	89.53
Գեղարքունիք	125	102	81.60	93	91.18
Լոռի	309	252	81.55	238	94.44
Կոտայք	220	171	77.73	150	87.72
Շիրակ	309	252	81.55	222	88.10
Սյունիք	131	102	77.86	95	93.14
Վայոց ձոր	51	42	82.35	36	85.71
Տավուշ	126	96	76.19	91	94.79
Ընդամենը	2308	1818	78.77	1646	90.54



Տեղեկատվություն դիմումատուների և մասնակիցների վերաբերյալ՝ ըստ տարիքային խմբերի

	18-35			35-50			50-65			65 և ավելի		
	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված
Երևան	130	84	72	186	131	123	159	125	109	65	59	51
Արագածոտն	109	81	74	111	92	81	77	66	60	20	20	18
Արարատ	145	93	84	173	113	104	77	54	49	21	16	14
Արմավիր	106	65	58	130	94	87	81	59	52	37	31	29
Գեղարքունիք	88	54	51	86	59	52	83	59	49	23	16	15
Լոռի	141	100	92	175	141	132	92	77	68	29	24	24
Կոտայք	88	58	52	151	115	102	84	67	63	15	10	9
Շիրակ	137	92	80	165	128	109	113	95	85	38	28	25
Սյունիք	35	25	25	99	68	63	41	32	29	17	12	11
Վայոց ձոր	29	21	16	35	28	25	18	15	15	2	2	2
Տավուշ	35	22	22	58	42	39	58	49	47	15	11	11
Ընդամենը	***1043***	***695***	***626***	***1369***	***1011***	***917***	***883***	***698***	***626***	***282***	***229***	***209***



2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2023 ԹՎԱԿԱՆ

2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2023թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2022թ. նոյեմբերի 11-ի թիվ 87-Ա որոշմամբ 2023 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էր սահմանել 2023 թվականի մարտի 26-ը, հունիսի 11-ը և հոկտեմբերի 29-ը:

2023 թվականի ընթացքում նշված որոշմամբ սահմանված օրերին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել թվով 4 համայնքներում:

2023 թվականի մարտի 26-ին Շիրակի մարզի Անի համայնքում և Սյունիքի մարզի Սիսիան համայնքում անցկացվել են համայնքի ավագանու ընտրություններ: ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1903-Ն որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու լիազորությունները, իսկ ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերիի 29-ի N 2093-Ն որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու լիազորությունները, երկու որոշումներով էլ նշանակվել են ավագանու արտահերթ ընտրություններ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով: Նշված որոշումների հիմքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 98-Ա և 2023 թվականի հունվարի 4-ի թիվ 1-Ա որոշումներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի և Սյունիքի մարզի Սիսիան համայքի ավագանու ընտրությունների անցկացման օր է նշանակվել 2023 թվականի մարտի 26-ը: Շիրակի մարզի Անի համայնքի և Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու ընտրություններն անցկացվել են համամասնական ընտրակարգով:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին Արարատի մարզի Վերին Դվին և Կոտայքի մարզի Արզնի համայնքներում մեծամասնական ընտրակարգով անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Արարատի մարզի Վերին Դվին համայնքում անցկացվել են համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններ, իսկ Կոտայքի մարզի Արզնի համայնքում՝ միայն համայնքի ղեկավարի ընտրություններ:

Ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքով ամրագրված իրավակարգավորումներին համապատասխան, որոնք ապահովում են լիակատար թափանցիկություն ընտրական գործընթացների բոլոր փուլերի համար՝ ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներին ընձեռելով վերահսկողության հնարավորություն:

Համամասնական ընտրակարգով Անի և Սիսիան համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն առաջինն էին, որոնց ընթացքում

իրականացվեցին ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում: Մինչ այս ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում իրականացվել է միայն Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ:

Միևնույն ժամանակ, այս ընտրություններին ապահովվել է Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի պահանջի կատարումը և առաջին անգամ՝ սահմանված կարգի համաձայն, տեսանկարահանվել ու հեռարձակվել են նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերը և վերահաշվարկը:

2023 թվականի մարտի 26-ին Շիրակի մարզի Անի համայնքում ավագանու ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել: 2023 թվականի մարտի 26-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է 1 դիմում, որում ներկայացված հարցադրումների վերաբերյալ թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տվել է գրավոր պատասխան և ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին Շիրակի մարզի Անի համայնքում տեղի ունեցած ավագանու ընտրությունների շրջանակներում ձևավորված թվով 20 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն 7 գրանցամատյաններում առկա է եղել թվով 10 գրառում:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին Շիրակի մարզի Անի համայնքում տեղի ունեցած ավագանու ընտրությունների արդյունքները դատական կարգով չեն բողոքարկվել:

2023 թվականի մարտի 26-ին Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղի ունեցած ավագանու ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում մինչև քվեարկության օրն ստացվել է թվով 6 դիմում, որոնք ներկայացվել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների կողմից և առնչվել են նախընտրական քարոզչության կանոնների պահպանմանը: Մեկ դիմումով հայցվել է տեղեկատվություն, որին սահմանված ժամկետում և կարգով տրվել է պատասխան, մնացած 5 դիմում-բողոքներով հարուցվել են վարչական վարույթներ և կայացվել են որոշումներ: Նշված որոշումներից մեկը՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի մարտի 25-ի N 16-Ա որոշումը, բողոքարկվել է ՀՀ վարչական դատարան, վերջինս կայացրել է հայցը մերժելու մասին վճիռ:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում քվեարկությունից հետո՝ 2023 թվականի մարտի 31-ին, ստացվել է 1 դիմում՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին, որով հարուցված վարչական վարույթի ուսումնասիրության արդյունքում

թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտել է, որ ներկայացված չեն այնպիսի հանգամանքներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա: 2023 թվականի մարտի 26-ին Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու ընտրությունների շրջանակներում այլ դիմումներ չեն ներկայացվել:

2023 թվականի մարտի 26-ին Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղի ունեցած ավագանու ընտրությունների շրջանակներում ձևավորված թվով 41 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից թվով 15 գրանցամատյաններում առկա են եղել թվով 39 գրառումներ:

2023 թվականի մարտի 26-ին Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղի ունեցած ավագանու ընտրությունների արդյունքները բողոքարկվել են ՀՀ վարչական դատարան: Հայցադիմումով ներկայացված պահանջները մերժվել են ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2034/05/23 գործով 2023 թվականի ապրիլի 11-ին կայացված որոշմամբ:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին Արարատի մարզի Վերին Դվին և Կոտայքի մարզի Արզնի համայնքներում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել, դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում ձևավորված թվով 3 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն 1 գրանցամատյանում առկա է եղել թվով 1 գրառում:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները դատական կարգով չեն բողոքարկվել:

2.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների ժամանակ 61 տեղամասերում գործարկվել են 87 տեխնիկական սարքավորումներ:

Ընդհանուր թվով 61 ընտրական տեղամասերից՝ 44 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել է մեկ տեխնիկական սարքավորում: Թվով 8 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են 2-ական և 9-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով, բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

Օգտագործված թվով 87 տեխնիկական սարքավորումներց են ընդամենը 7 տեխնիկական սարքավորումներ են ունեցել խնդիրներ, որոնք անհապաղ լուծում են ստացել: Առկա չի եղել որևէ դեպք, երբ դադարեցվի տեխնիկական սարքավորման աշխատանքը:

2023 թվականի հոկտեմբերի 29-ի ընտրությունների ժամանակ 3 տեղամասերում գործարկվել են 7 տեխնիկական սարքավորումներ: Թվով 2 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են 2-ական և մեկում՝ 3 տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը ևս եղել է սինքրոնիզացված:

2023 թվականի մարտի 26-ին և հոկտեմբերի 29-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության օրերին բոլոր 64 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով, քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

2.3. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով տեղեկատվության հասանելիությունը Կենտրոնական ընտրական հանձաժողովն առանձնակի ուշադրություն է դարձրել ընտրությունների հրապարակայնության, թափանցիկության, մատչելիության բաղադրիչներին:

Ընտրողներն Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեկացվել են ընտրական հանձնաժողովների կազմերի, գտնվելու վայրերի, աշխատաժամերի, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, քվեարկության օրվա, տեղի, ժամանակի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել են տեղեկատվական բնույթի պաստառներ, ուղեցույցներ, հուշաթերթեր, որոնք հրապարակվել են նաև հանձնաժողովի կայքում:

Ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու համար: Մասնավորապես՝ 61 տեղամասային ընտրական հանձնաժողովներում առկա են եղել բրայլյան ստվարաթղթե կաղապարներ՝ նախատեսված քվեաթերթիկների համար, ինչպես նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անվանումների ու հերթական համարների բրայլյան տպագրությամբ թերթիկներ:

Ընտրական տեղամասերի ձևավորման փուլում ստացվել և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ներբեռնվել է մատչելի տեղամասային կենտրոնների ցանկը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ձեռնարկել են համապատասխան բարելավումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիությունը, ժամանակավոր թեքահարթակների տեղադրման, քվեարկության սենյակը երկրորդ հարկից առաջին հարկ տեղափոխման միջոցով:

Սիսիան համայնքում մատչելի տեղամասային կենտրոնների թիվը եղել է 9-ը, Անի համայնքում՝ 6-ը, Արզնի համայնքում 2-ը:

Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել

հրապարակային ծանուցումներ: Բոլոր ծանուցումները, նիստերի օրակարգերը, հանձնաժողովների որոշումները հրապարակվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

2.4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ 2023թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզ	Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	Համայնքի ղեկավար		Ավագանու անդամ		Համամասնական ընտրակարգով	
		Ընդամենը	որից՝ արտա-հերթ	Ընդամենը	որից՝ արտա-հերթ	Ընդամենը	որից՝ արտա-հերթ
Արարատ	1	1	0	1	0	0	0
Կոտայք	1	1	0	0	0	0	0
Շիրակ	1	0	0	0	0	1	1
Սյունիք	1	0	0	0	0	1	1
Ընդամենը	**4**	**2**	**0**	**1**	**0**	**2**	**2**

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ, ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Մարզ	**Համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ**	**Տեղամասերի թիվը**	**Ընտրողների թիվը**	**Քվեարկության մասնակիցների թիվը**	**%**
Արարատ	1	1	1552	818	52.71
Կոտայք	1	2	2136	1164	54.49
Շիրակ	1	20	15934	9869	61.94
Սյունիք	1	41	22890	11354	49.60
Ընդամենը	**4**	**64**	**42512**	**23205**	**54.58**





2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

	ընտրողներից՝ արական %	մասնակցել են, %	ընտրողներից՝ իգական %	մասնակցել են, %
Արարատ	53.72	50.72	46.28	54.55
Կոտայք	52.72	53.38	47.28	55.56
Շիրակ	50.19	63.69	49.81	60.11
Սյունիք	50.47	48.87	49.53	50.32
Ընդամենը	50.59	54.69	49.41	54.42



2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ





ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ ԵՎ ՍԵՌԻ

Համայնք	ընտրա-տարածք	իգական	այդ թվում՝ նախագահ	այդ թվում ՝ քարտուղար	արական	18-35	35-50	50-65	65+
Արարատ	12	5	0	1	3	3	2	3	0
Կոտայք	28	7	1	1	9	4	6	6	0
Շիրակ	33	101	9	16	59	44	59	48	9
Սյունիք	34	219	16	32	109	66	124	112	26
Ընդամենը		332	26	50	180	117	191	169	35




ՏԸՀ անդամներն ըստ սեռի
Սյունիք
Շիրակ
Կոտայք
Արարատ
0
50
100
150
200
250
300
350
իգական
արական


ՏԸՀ կին անդամներ
իգական
այդ թվում՝ նախագահ
այդ թվում՝ քարտուղար
250
200
150
100
50
0
Արարատ
Կոտայք
Շիրակ
Սյունիք


ՏԸՀ անդամներն ըստ տարիքի
140
120
100
80
60
40
20
0
Արարատ
Կոտայք
Շիրակ
Սյունիք
18-35
35-50
50-65
65+

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ընդ.	ԶԼՄ ներկայացուցիչների կամ դիտորդների թիվը	Իգական	Արական	18-35	35-50	50-65	65+
Զանգվածային լրատվության միջոց	13	58	26	32	28	25	5	0
Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ԶԼՄ	2	16	4	12	10	5	1	0
Տեղական դիտորդ	2	55	24	31	36	14	3	2
Ընդամենը	17	129	54	75	74	44	9	2





2.5. ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2023 ԹՎԱԿԱՆ)

2023 թվականի հոկտեմբերի 29-ին մեծամասնական ընտրակարգով ընտրություններ են անցկացվել Արարատի մարզի Վերին Դվին և Կոտայքի մարզի Արզնի համայնքներում:

Վերին Դվին համայնքում անցկացվել են համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններ, իսկ Արզնի համայնքում՝ համայնքի ղեկավարի:

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Մարզ	առաջադրված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արարատ	3	3	1
Կոտայք	5	5	1
Ընդամենը	**8**	**8**	**2**



Ավագանու անդամների թեկնածուներ

Մարզ	առաջադրված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արարատ	13	13	7
Կոտայք	0	0	0
Ընդամենը	**13**	**13**	**7**





Տեղեկատվություն համայնքի ղեկավարի թեկնածուների վերաբերյալ՝ ըստ սեռի

Մարզ	առաջադրված		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արարատ	2	1	2	1	0	1
Կոտայք	5	0	5	0	1	0
Ընդամենը	**7**	**1**	**7**	**1**	**1**	**1**



Տեղեկատվություն ավագանու անդամների թեկնածուների վերաբերյալ՝ ըստ սեռի

Մարզ	առաջադրված		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արարատ	10	3	10	3	6	1
Ընդամենը	**10**	**3**	**10**	**3**	**6**	**1**



Տեղեկատվություն համայնքի ղեկավարի թեկնածուների վերաբերյալ՝ ըստ տարիքի

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արարատ	1	0	1	0	1	1
Կոտայք	1	0	4	1	0	0
Ընդամենը	2	0	5	1	1	1



Տեղեկատվություն ավագանու անդամի թեկնածուների վերաբերյալ՝ ըստ տարիքի

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արարատ	8	3	5	4	0	0
Ընդամենը	8	3	5	4	0	0



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Մարզ	համայնքների քանակը	թեկնածուների քանակը	ընտրական ցուցակներում առաջադրման ժամանակ ընդգրկված թեկնածուների քանակը
Շիրակ	1	4	197
Սյունիք	1	3	126
Ընդամենը	2	7	323





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2023Թ. ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

2024 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

Մարզ	Համայնքների քանակը	Կուսակցությ. քանակը	ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների քանակը	որից					
				Քվեարկ. մասնակց. թեկնածու	Ինքնա-բացարկ	*Մանդատը դադարած*	Հետ է վերցրել փաստաթղթերը	Անվավեր	Մերժված
Շիրակ	1	4	197	175	6	14	2	0	0
Սյունիք	1	3	126	124	1	1	0	0	0
Ընդամենը	**2**	**7**	**323**	**299**	**7**	**15**	**2**	**0**	**0**





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ 2024Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

Մարզ	*Առաջին բաշխմամբ ընտրված*		*Ընտրական ցուցակներում գրանցված թեկնածուներ*		*Ընտրված*		*Մանդատը դադարած*	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Շիրակ	13	8	118	57	14	7	8	6
Սյունիք	14	7	81	43	14	7	1	0
Ընդամենը	27	15	199	100	28	14	9	6









2023 թվականին տեղի ունեցած համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանիների ընտրությունների արդյունքում ընտրված կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուներից մանդատ են ստացել 139-ը (իգական սեռի 46 ներկայացուցիչ, արական սեռի՝ 93):

2023 թվականի ընթացքում Հանրապետության 61 համայնքների ավագանիների ընտրական ցուցակներում ընդգրկված անձանց կողմից ներկայացվել է ընդհանուր թվով 97 ինքնաբացարկի դիմում, որից 41-ը իգական սեռի ներկայացուցիչների կողմից, 56-ը՝ արական սեռի: Վաղաժամկետ դադարել է 97 ավագանու անդամի լիազորություն, որից՝ 399 կին, 58 տղամարդ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ
2024Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

Մարզ	մինչև 35	որից՝ ընտրված	35-50	որից՝ ընտրված	50-65	որից՝ ընտրված	65 և ավելի	որից՝ ընտրված
Շիրակ	65	2	81	12	43	5	8	2
Սյունիք	22	4	60	9	34	5	10	3
Ընդամենը	87	6	141	21	77	10	18	5





ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության ընդհանուր թվով 70 համայնքներից 9 համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով:

Այդ համայնքներն են՝ ***Արագածոտնի մարզի Ալագյազ, Արեվուտ, Մեծաձոր, Շամիրամ, Արարատի մարզի Վերին Դվին, Արմավիրի մարզի Ֆերիկ, Լոռու մարզի Լերմոնտովո և Կոտայքի մարզի Արզնի***:

Մարզ	համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	համայնքի ղեկավար		ավագանու անդամի	
		ընդ.	որից՝ արտահերթ	ընդ.	որից՝ արտահերթ
Արագածոտն	4	4	0	4	0
Արարատ	1	1	0	1	0
Արմավիր	1	1	0	1	0
Լոռի	2	2	0	2	0
Կոտայք	1	1	0	1	0
Ընդամենը	**9**	**9**	**0**	**9**	**0**

Համայնքի ղեկավարի ընտրություններ

Հարկ է նշել, որ Ալագյազ, Շամիրամ, Վերին Դվին, Ֆերիկ, Լերմոնտովո համայնքներում վերընտրվել են գործող ղեկավարներ, Կոտայքի մարզի Արզնի համայնքում թեև առաջադրվել է համայնքի գործող ղեկավարը, սակայն չի ընտրվել: Իսկ Արագածոտնի մարզի Արեվուտ և Շամիրամ համայնքներում գործող ղեկավարները չեն առաջադրվել:

Մարզ	համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	առաջադրված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արագածոտն	4	8	8	4
Արարատ	1	3	3	1
Արմավիր	1	3	3	1
Լոռի	2	5	5	2
Կոտայք	1	5	5	1
Ընդամենը	**9**	**24**	**24**	**9**





Ավագանու անդամների ընտրություններ

Մարզ	համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	առաջադրված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արագածոտն	4	36	36	24
Արարատ	1	13	13	7
Արմավիր	1	6	6	5
Լոռի	2	18	18	10
Կոտայք	1	14	14	9
Ընդամենը	**9**	**87**	**87**	**55**


ավագանու անդամներ
առաջադրված
քվ. մասն. թեկնածուներ
40
35
30
25
20
15
10
5
0
Արագածոտն
Արարատ
Արմավիր
Գեղարքունիք
Լոռի
Կոտայք
Շիրակ
Սյունիք
Վայոց ձոր
Տավուշ


Ընտրվածների տոկոսը քվեարկությանը մասնակցած թեկնածուների նկատմամբ
63.64
50.00
66.67
52.17
52.63
Արագածոտն
Արարատ
Արմավիր
Լոռի
Կոտայք

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

2024Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Մարզ	առաջադրված		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	8	0	8	0	4	0
Արարատ	2	1	2	1	0	1
Արմավիր	3	0	3	0	1	0
Լոռի	5	0	5	0	2	0
Կոտայք	5	0	5	0	1	0
Ընդամենը	**23**	**1**	**23**	**1**	**8**	**1**



ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Մարզ	առաջադրված		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	32	4	32	4	22	2
Արարատ	10	3	10	3	6	1
Արմավիր	6	0	6	0	5	0
Լոռի	13	5	13	5	9	1
Կոտայք	11	3	11	3	7	2
Ընդամենը	**72**	**15**	**72**	**15**	**49**	**6**



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ

2024Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	1	0	3	2	4	2
Արարատ	1	0	1	0	1	1
Արմավիր	0	0	1	0	2	1
Լոռի	2	0	1	1	2	1
Կոտայք	1	0	4	1	0	0
Ընդամենը	5	0	10	4	9	5



ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	12	10	18	10	6	4
Արարատ	8	3	5	4	0	0
Արմավիր	4	3	2	2	0	0
Լոռի	8	4	7	4	3	2
Կոտայք	2	2	3	2	9	5
Ընդամենը	34	22	35	22	18	11



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

2024Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

			ընտրական ցուցակ-ներում գրանցված թեկնածուներ[5]		Ընտրված		Մանդատը դադարած	
Ընտրության օրը	ԸԸՀ	համայնք	ար.	Իգ.	ար.	Իգ.	ար.	Իգ.
17.10.2021	31	Գյումրի	163	96	21	12	5	2
17.10.2021	34	Գորիս	62	31	14	7	2	1
17.10.2021	34	Տաթև	34	11	10	5	3	4
17.10.2021	34	Տեղ	19	5	12	3	3	0
17.10.2021	35	Մեղրի	64	34	9	6	0	1
17.10.2021	38	Դիլիջան	63	39	13	8	0	2
14.11.2021	25	Ստեփանավան	35	16	15	6	2	2
14.11.2021	35	Կապան	71	38	18	9	4	1
14.11.2021	38	Իջևան	41	18	19	8	4	1
05.12.2021	11	Մասիս	81	36	17	10	3	1
05.12.2021	12	Արտաշատ	121	50	22	11	10	2
05.12.2021	13	Արարատ	82	24	21	6	5	5
05.12.2021	14	Արաքս	59	25	14	7	3	2
05.12.2021	14	Վաղարշապատ	63	33	18	9	1	0
05.12.2021	14	Փարաքար	67	31	14	7	2	1
05.12.2021	15	Խոյ	34	18	13	8	2	2
05.12.2021	15	Մեծամոր	33	8	21	6	1	3
05.12.2021	16	Արմավիր	21	10	18	9	2	1
05.12.2021	16	Բաղրամյան	38	15	14	7	5	3
05.12.2021	17	Աշտարակ	75	25	20	7	2	1
05.12.2021	17	Ապարան	44	0	21	0	3	0
05.12.2021	19	Գավառ	87	29	19	8	2	3
05.12.2021	20	Սևան	43	9	24	2	2	1
05.12.2021	21	Մարտունի	121	46	18	9	5	1
05.12.2021	21	Վարդենիս	90	42	18	9	0	0
05.12.2021	22	Սպիտակ	72	34	19	8	9	2
05.12.2021	23	Վանաձոր	207	105	21	12	2	3
05.12.2021	24	Թումանյան	35	9	12	3	4	1
05.12.2021	24	Փամբակ	29	13	10	5	0	1
05.12.2021	26	Ծաղկաձոր	26	9	11	4	1	0

[5] Ներառված են քվեարկություններին մասնակցած ընտրական ցուցակներով առաջադրված բոլոր թեկնածուները

			ընտրական ցուցակ-ներում գրանցված թեկնածուներ[5]		Ընտրված		Մանդատը դադարած	
Ընտրության օրը	ԸԸՀ	համայնք	ար.	Իգ.	ար.	Իգ.	ար.	Իգ.
05.12.2021	26	Հրազդան	43	23	18	9	3	0
05.12.2021	27	Նաիրի	106	51	18	9	2	1
05.12.2021	28	Նոր Հաճըն	53	23	15	6	4	2
05.12.2021	29	Աբովյան	106	52	19	8	6	2
05.12.2021	29	Գառնի	20	1	14	1	7	4
05.12.2021	30	Ամասիա	36	24	5	4	5	0
05.12.2021	30	Աշոցք	30	12	10	5	1	2
05.12.2021	32	Ախուրյան	94	35	19	8	4	7
05.12.2021	33	Արթիկ	127	50	18	9	3	1
05.12.2021	36	Եղեգնաձոր	61	20	15	6	0	1
05.12.2021	36	Ջերմուկ	14	11	8	6	3	1
05.12.2021	36	Վայք	99	48	9	6	1	1
05.12.2021	37	Նոյեմբերյան	56	19	16	5	4	1
27.03.2022	13	Վեդի	76	25	22	5	20	16
25.09.2022	17	Ծաղկահովիտ	48	19	11	4	0	1
25.09.2022	18	Թալին	139	9	24	3	4	4
25.09.2022	20	Ճամբարակ	26	2	19	2	0	0
25.09.2022	22	Գյուլագարակ	35	20	11	4	2	2
25.09.2022	24	Ալավերդի	94	52	19	8	5	2
25.09.2022	25	Լոռի Բերդ	34	23	8	7	1	0
25.09.2022	25	Տաշիր	68	36	14	7	6	3
25.09.2022	27	Չարենցավան	101	13	24	3	1	2
25.09.2022	28	Ակունք	38	10	11	4	0	0
25.09.2022	28	Բյուրեղավան	68	25	10	5	0	1
25.09.2022	29	Ջրվեժ	27	15	9	6	2	0
25.09.2022	35	Քաջարան	79	42	11	4	0	1
25.09.2022	36	Արենի	23	9	11	4	0	1
25.09.2022	36	Եղեգիս	30	6	12	3	0	1
25.09.2022	38	Բերդ	90	50	13	8	2	0
26.03.2023	33	Անի	118	57	14	7	8	6
26.03.2023	34	Սիսիան	81	43	14	7	1	0
Ընդամենը			***4000***	***1684***	***937***	***384***	***182***	***110***

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

2024Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

	ընտրական ցուցակ-ներում գրանցված թեկնածուներ[6]		ընտրված		Մանդատը դադարած	
Մարզ	ար.	Իգ.	ար.	Իգ.	ար.	Իգ.
Արագածոտն	306	53	76	14	9	6
Արարատ	360	135	82	32	38	24
Արմավիր	315	140	112	53	16	12
Գեղարքունիք	367	128	98	30	9	5
Լոռի	609	308	129	60	31	16
Կոտայք	588	222	149	55	26	12
Շիրակ	568	274	87	45	26	18
Սյունիք	410	204	88	41	13	8
Վայոց ձոր	227	94	55	25	4	5
Տավուշ	250	126	61	29	10	4
Ընդամենը	4000	1684	937	384	182	110





[6] ներառված է քվեարկություններին մասնակցած բոլոր ընտրական ցուցակների վերաբերյալ տեղեկատվությունը

2.6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ - 2023 ԹՎԱԿԱՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 43-րդ և 143-րդ հոդվածներով 2022 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունել է թիվ 89-Ա որոշումը, որով հաստատվել են թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների յոթական անդամները: 2023 թվականի հունվարին մշակվել են նոր կազմավորված հանձնաժողովների մասնագիտական դասընթացների մեթոդիկան և ուսումնական նյութերը: 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար 2023 թվականի փետրվարից սկսած պարբերաբար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ: Հարկ է նշել, որ Երևանի թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար մասնագիտական դասընթացները կազմակերպվել են առանձին մշակված մեթոդիկայի և ուսումնական նյութերի համապատասխան:

2023 թվականի մարտի 26-ին և հոկտեմբերի 29-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար կազմավորված բոլոր 64 տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակված 512 անդամների համար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար 2023 թվականին ապրիլի 18-ից մինչև հունիսի 29-ը կազմակերպվել և անցկացվել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստուգարքներ: Նշված դասընթացներին մասնակցելու համար ներկայացվել էր 9338 հայտ, որոնցից 4826-ը ներկայացվել էր կուսակցությունների կողմից, իսկ 4512-ը քաղաքացիների: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 6630 քաղաքացիներ, որոնցից 5303-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:

Ստորև ներկայացված են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար 2023 թվականին կազմակերպված մասնագիտական դասընթացների և ստուգարքերի ամփոփ տվյալները:

Տեղեկատվություններ 2023թ. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կազմակերպված ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների վերաբերյալ[7]

	Ընդամենը	մասնակցել են	%	ստուգված են ստացել	%-ը մասնակիցներից
Երևան	2200	1506	68.45	1223	81.21
Արագածոտն	652	455	69.79	335	73.63
Արարատ	595	392	65.88	271	69.13
Արմավիր	467	342	73.23	254	74.27
Գեղարքունիք	833	550	66.03	424	77.09
Լոռի	1282	947	73.87	771	81.41
Կոտայք	679	528	77.76	457	86.55
Շիրակ	1242	937	75.44	756	80.68
Սյունիք	586	386	65.87	314	81.35
Վայոց Ձոր	202	143	70.79	107	74.83
Տավուշ	600	444	74.00	391	88.06
Ընդամենը	***9338***	***6630***	***71.00***	***5303***	***79.98***



[7] Տեղեկատվությունը ներկայացվում է ըստ դասընթացների անցկացման վայրերի



Տեղեկատվություն՝ըստ հայտ ներկայացնողների

Հայտատու	Ընդամենը	մասնակցել են	%	ստուգված են ստացել	%-ը մասնակիցներից
Ըստ կուսակցությունների հայտերի	4826	3228	66.89	2463	76.30
Ըստ քաղաքացիների դիմումների	4512	3402	75.40	2840	83.48
Ընդամենը	***9338***	***6630***	***71.00***	***5303***	***79.98***



Տեղեկատվություն՝ ըստ հայտ ներկայացնող կուսակցությունների

Հայտատու	Ընդամենը	մասնակ-ցել են	%	ստացել են ստուգված	%-ը մասնա-կիցներից
ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	2	8.33	2	100.00
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	443	283	63.88	215	75.97
ՀԱՅՐԵՆԻՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	147	92	62.59	71	77.17
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1702	1174	68.98	884	75.30
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1365	883	64.69	663	75.08
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1145	794	69.34	628	79.09
Ընդամենն ըստ կուսակցությունների հայտերի	**4826**	**3228**	**66.89**	**2463**	**76.30**



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐ

	Ընդամենը	մասնակցել են	%	ստացել են ստուգված	%-ը մասնակիցներից
Երևան	794	491	61.84	374	76.17
Արագածոտն	348	247	70.98	168	68.02
Արարատ	273	158	57.88	103	65.19
Արմավիր	197	145	73.60	104	71.72
Գեղարքունիք	562	341	60.68	257	75.37
Լոռի	407	273	67.08	213	78.02
Կոտայք	301	219	72.76	181	82.65
Շիրակ	371	251	67.65	191	76.10
Սյունիք	181	95	52.49	78	82.11
Վայոց ձոր	120	84	70.00	55	65.48
Տավուշ	229	155	67.69	129	83.23
Ընդամենը	3783	2459	65.00	1853	75.36

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐ

	Ընդամենը	մասնակցել են	%	ստացել են ստուգված	%-ը մասնակիցների g
Երևան	1406	1015	72.19	849	83.65
Արագածոտն	304	208	68.42	167	80.29
Արարատ	322	234	72.67	168	71.79
Արմավիր	270	197	72.96	150	76.14
Գեղարքունիք	271	209	77.12	167	79.90
Լոռի	875	674	77.03	558	82.79
Կոտայք	378	309	81.75	276	89.32
Շիրակ	871	686	78.76	565	82.36
Սյունիք	405	291	71.85	236	81.10
Վայոց ձոր	82	59	71.95	52	88.14
Տավուշ	371	289	77.90	262	90.66
Ընդամենը	5555	4171	75.09	3450	82.71



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

	18-35			35-50			50-65			65 և ավելի		
	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված	Ընդամենը	մասնակցել են	ստացել են ստուգված
Երևան	639	374	309	751	534	448	593	435	351	217	163	115
Արագածոտն	224	141	108	229	161	113	151	117	90	48	36	24
Արարատ	187	116	80	216	148	97	142	91	68	50	37	26
Արմավիր	156	104	83	135	96	66	126	103	81	50	39	24
Գեղարքունիք	235	131	102	254	164	128	252	183	140	92	72	54
Լոռի	441	315	250	441	307	254	302	249	204	98	76	63
Կոտայք	213	153	144	284	227	187	145	119	105	37	29	21
Շիրակ	369	245	203	485	387	321	287	225	174	101	80	58
Սյունիք	147	75	63	236	165	139	159	120	92	44	26	20
Վայոց ձոր	46	31	22	82	61	49	52	34	24	22	17	12
Տավուշ	169	112	104	240	181	156	150	123	108	41	28	23
Ընդամենը	2826	1797	1468	3353	2431	1958	2359	1799	1437	800	603	440





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 01.03.2024Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[8]

	Ընդամենը	արական	%	իգական	%
Երևան	6206	2197	35.40	4009	64.60
Արագածոտն	1717	874	50.90	843	49.10
Արարատ	1242	473	38.08	769	61.92
Արմավիր	1924	675	35.08	1249	64.92
Գեղարքունիք	1458	864	59.26	594	40.74
Լոռի	3076	863	28.06	2213	71.94
Կոտայք	1652	696	42.13	956	57.87
Շիրակ	3097	958	30.93	2139	69.07
Սյունիք	1808	550	30.42	1258	69.58
Վայոց ձոր	550	245	44.55	305	55.45
Տավուշ	1186	341	28.75	845	71.25
Ընդամենը	23916	8736	36.53	15180	63.47





[8] Տեղեկատվությունը ներկայացվում է ըստ դասընթացների անցկացման վայրերի

Ըստ տարիքային խմբերի

	18-35	35-50	50-65	65 և ավելի
Երևան	2074	2051	1532	549
Արագածոտն	609	543	445	120
Արարատ	461	414	269	98
Արմավիր	602	650	499	173
Գեղարքունիք	392	456	457	153
Լոռի	1069	1087	705	215
Կոտայք	525	666	366	95
Շիրակ	986	1163	700	248
Սյունիք	533	737	418	120
Վայոց ձոր	193	213	115	29
Տավուշ	350	456	305	75
Ընդամենը	7794	8436	5811	1875



Տեղեկատվություն 01.03.2024թ դրությամբ որակավորման վկայականներ ունեցող անձանց մասին, ովքեր նշանակվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ

	Ընդամենը	նշանակվել են ՏԸՀ անդամ	%	1 անգամ	2 անգամ	3 անգամ	4 անգամ	5 անգամ	6 անգամ
Երևան	11692	4441	37.98	3038	1176	192	30	3	2
Արագածոտն	2819	1010	35.83	593	334	77	6	0	0
Արարատ	2288	690	30.16	446	181	51	10	2	0
Արմավիր	3094	1018	32.9	615	348	53	2	0	0
Գեղարքունիք	2836	764	26.94	466	258	37	3	0	0
Լոռի	4538	1335	29.42	929	335	65	6	0	0
Կոտայք	2686	900	33.51	588	248	50	13	1	0
Շիրակ	4472	1285	28.73	864	338	77	6	0	0
Սյունիք	2786	1000	35.89	556	350	83	10	1	0
Վայոց ձոր	845	311	36.8	200	93	16	2	0	0
Տավուշ	1964	463	23.57	314	133	16	0	0	0
Ընդամենը	40020	13217	33.03	8609	3794	717	88	7	2





Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 20.10.2023թ. մի շարք որոշումներով ուժը կորցրած է ճանաչվել 9 քաղաքացու որակավորման վկայական, իսկ 15.03.2022թ. 14-Ա որոշմամբ՝ 1 քաղաքացու:

3. ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 13-ի թիվ 1163-Ն որոշմամբ Երևանի ավագանու հերթական ընտրությունը նշանակվել է 2023 թվականի սեպտեմբերի 17-ին:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների նախապատրաստումն ու կազմակերպումն իրականացվել է Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածին և 44-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Երևանի քաղաքի թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և թվով 475 տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված են եղել ընդհանուր թվով 3.800 քաղաքացիներ, իսկ թվով 1.361 քաղաքացիներ մասնագետի կարգավիճակով իրականացրել են ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների աշխատանքի կազմակերպումը:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների ժամանակ ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Երևանի ավագանու 2023 թվականի ընտրություններին մասնակցելու համար առաջադրման փաստաթղթեր են ներկայացրել 13 կուսակցություն և 1 կուսակցությունների դաշինք: Բոլոր առաջադրված քաղաքական ուժերը գրանցվել են:

Մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ իրազեկելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի միջև հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակների բաշխման արդյունքների մասին: Նույն գրությամբ Երևանի քաղաքապետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարն իրազեկվել են խախտմամբ փակցված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանելու համայնքի ղեկավարի լիազորության մասին:

Խախտմամբ փակցված քարոզչական պաստառների, քարոզչական այլ նյութերի առկայության մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացված տեղեկությունների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այլ գրությամբ իրազեկել է Երևանի քաղաքապետին: Երևանի քաղաքապետի 18.09.2023թ. N 01/170634-23 գրությամբ պատասխան է ստացվել, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառներ, քարոզչական այլ նյութեր հայտնաբերվելու դեպքում դրանք ապամոնտաժվել են:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ընտրությունների կազմակերպման և ընտրական գործընթացների վերաբերյալ ստացել է ընդհանուր թվով 14 դիմում, որոնցից 8-ը ներկայացվել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքի կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների կողմից: Մասնավորապես,

- ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ կուսակցությունը ներկայացրել է դիմում՝ նախընտրական քարոզչության հավասար պայմաններ ապահովելու հարցում հետամուտ լինելու խնդրանքով: Դիմումն ուղարկվել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով,
- ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ կուսակցությունը ներկայացրել է 3 դիմում: Նախընտրական քարոզչության սահմանված կարգի ենթադրյալ խախտումների վերաբերյալ մեկ դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն, երկրորդ դիմումով նախընտրական քարոզչության սահմանված կարգի ենթադրյալ խախտումների վերաբերյալ հանգամանքների ստուգման նպատակով կատարվել են ուսումնասիրություններ, ստացվել են բացատրություններ, որոնց արդյունքում խախտումներ չեն արձանագրվել, և, երրորդ դիմումով կուսակցությունը պահանջել է հիմնավորում՝ ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վերաբերյալ, որին գրությամբ տրվել է պատասխան,
- ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցությունը և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն ներկայացրել են մեկ դիմում ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց քվեարկելու ընթացակարգերի վերաբերյալ պարզաբանման պահանջով (գրությամբ տրվել է պատասխան), և ևս 3 դիմում՝ կալանքի տակ գտնվող թեկնածուի՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելու հավասար պայմաններ ապահովելու խնդրանքով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես օպերատիվ լուծում պահանջող հարց, ձեռնարկել է միջոցներ և ապահովել է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 9–րդ մասի պահանջների կատարումը: Իսկ հեռուստաբանավեճերին թեկնածուի մասնակցությունն ապահովելու մասով դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն:

Թվով 6 դիմում ներկայացվել է համատեղ դիտորդական առաքելության կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների կողմից, որոնցից՝

- 1 դիմումով ներկայացվել են սահմանված վայրերում փակցված քարոզչական պաստառները պոկելու, պատռելու, դրանց վրա գրառումներ կատարելու վերաբերյալ հանգամանքներ, դիմումն ուղարկվել է ՀՀ ներքին գործերի նախարարություն,
- 1 դիմումով ներկայացվել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի հնարավոր խախտումների վերաբերյալ հանգամանքներ, դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն,
- 2 դիմումով ներկայացվել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի հնարավոր խախտումների վերաբերյալ հանգամանքներ, որոնց ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը խախտում չի հայտնաբերել,
- 2 դիմումով ներկայացվել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի հնարավոր խախտումների վերաբերյալ հանգամանքներ, որոնց ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզել է, որ դիմումներում նշված հանգամանքները վերաբերում են թվով 5 կուսակցությունների և կուսակցությունների մեկ դաշինքի տպագիր քարոզչական նյութերին: Թվով 3 կուսակցություններին առնչվող հանգամանքներում նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում առկա չի եղել: Երեք դեպքում նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտմամբ տպագրված քարոզչական նյութերի առնչությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մինչ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված հանգամանքները պարզելուն ուղղված միջոցներ ձեռնարկելը, նշված խախտումներն արդեն իսկ վերացված են եղել, ինչի վերաբերյալ կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը ներկայացրել են բացատրագրեր:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը, թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին որևէ գրավոր դիմում չի ներկայացվել:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած դեպքերի վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կարգով ուսումնասիրվել են իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից, դրանցում ներկայացվող տեղեկությունների իսկությունը և փաստական հանգամանքները պարզվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու իրավիճակային վերլուծության կենտրոնն օպերատիվ կարգով արձագանքել են մեկ տասնյակից ավելի կայքերում տեղ գտած մոտ երեք տասնյակ հաղորդումներին, ստուգվել են հրապարակվող հանգամանքները և տրվել մեկնաբանություններ: Մեկնաբանությունների ու պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը հենց քվեարկության օրը զետեղվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է 2 դիմում, որոնցից 1-ը ներկայացվել է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ կուսակցության կողմից՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման հիմքով դատարան դիմելու և ընտրություններին մասնակցող կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով, որը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով գրությամբ վերադարձվել է: Քվեարկության օրն ստացված մյուս դիմումով ներկայացվել են դիտորդի իրավունքների իրականացմանը խոչընդոտելուն առնչվող հանգամանքներ, որի կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձեռնարկել է օպերատիվ միջոցներ դիտորդի իրավունքների հնարավոր խոչընդոտները վերացնելու ուղղությամբ և լուծել է առաջացած խնդիրները: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ներկայացված հանգամանքներում, հնարավոր է, առկա են եղել քրեաիրավական բնույթի հատկանիշներ, նշված դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

Քվեարկության օրը թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից միայն մեկ՝ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստացվել է մեկ դիմում, որին տրվել է գրավոր պատասխան:

Քվեարկության օրվանից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստացել է թվով 8 դիմում, որոնցից՝

- 3-ը՝ հարցում և հարցադրումներ պարունակող դիմումներ են, որոնց գրությամբ տրվել են պատասխաններ,
- 1 դիմում ներկայացվել է համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունից՝ դիտորդի լիազորությունները դադարեցնելու պահանջով, որին գրությամբ տրվել է պատասխան,
- 1 դիմում ներկայացվել է «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցությունների դաշինքի կողմից՝ տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեջ սխալ տվյալի մուտքագրման վերաբերյալ՝ սխալը շտկելու պահանջով: Դիմումի պահանջը բավարարվել է, և սխալն ուղղվել է:
- 1 դիմում գրառվել է ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցության վստահված անձի կողմից՝ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, որում նկարագրված է թիվ 6/32 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտում: Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկել է 6/32 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները և արձանագրությամբ վավերացրել, նաև դիմումատուին տրվել է գրավոր պատասխան:
- 1 դիմում ներկայացվել է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ կուսակցության կողմից՝ նույն կուսակցության դիմումը վերադարձնելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գրությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին բողոքարկելու, ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման հիմքով դատարան դիմելու և ընտրություններին մասնակցող կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջներով: Ներկայացված դիմումը

քննարկվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 23.09.2023թ. նիստում և կայացվել թիվ 62-Ա որոշումը:

- 1 դիմում ներկայացվել է հասարակական կազմակերպությունից՝ քվեարկության օրը ժամը 20:00-ից հետո ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացված դիտարկումների վերաբերյալ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 23.09.2023թ. նիստում հասարակական կազմակերպության դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժվել է, և նույն նիստում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի կանոնակարգումների համաձայն՝ սեփական նախաձեռնությամբ իրականացրել է վարչական վարույթ և կայացրել՝ թիվ 61-Ա որոշումը:

Քվեարկության օրվանից հետո թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից միայն թիվ 6, 8 և 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է ընդհանուր թվով 3 դիմում, որոնցից՝ 2-ը ներկայացվել են համատեղ դիտորդական առաքելություն իրականացրած հասարակական կազմակերպության կողմից, որոնցում արտացոլված հանգամանքներն արձանագրված են եղել նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում, և դրանցով իրականացվել են վարչական վարույթներ: Գրանցամատյաններում առկա գրառումների ուսումնասիրությամբ հարուցված վարչական վարույթների արդյունքում ընդունված որոշումներով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները գնահատել են դրանց ազդեցությունը տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Քվեարկության օրվանից հետո մյուս դիմումը ներկայացվել է ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցության վստահված անձի կողմից՝ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով:

Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ներկայացվել է 1 դիմում, որի հիմքով մեկ տեղամասում քվեարկության արդյունքները վերահաշվարկվել են:

475 տեղամասերից միայն 148 (կամ ընդհանուր տեղամասերի թվի 31%-ում) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարվել են թվով 281 գրառումներ, իսկ 327 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյան-ներում որևէ գրառում առկա չէ:

475 տեղամասերից որևէ տեղամասի քվեարկության արդյունքների արձանագրություններում առկա չէ նշում հատուկ կարծիք ունենալու մասին:

2023 թվականի սեպտեմբերի 22-ին բոլոր 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ՝ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ, որոնցով ամրագրվել է, որ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների

վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն իրենց կողմից ընդունված որոշումներով միջնորդել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել այն տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների, քարտուղարների կամ անդամների՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները, ովքեր թույլ են տվել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների առանձին ընթացակարգային խախտումներ:

Միջնորդությունների քննությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բավարարել է թիվ 1, 3, 4, 6, 7, 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների միջնորդությունները և 14 անձանց ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած են ճանաչվել: Թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը մերժվել է, իսկ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարվել է մասամբ. թվով 3 անձանց մասով բավարարվել է և նրանց՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած են ճանաչվել, իսկ մեկ անձի վերաբերյալ միջնորդությունը մերժվել է:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում չի ներկայացվել:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների արդյունքները դատական կարգով չեն բողոքարկվել:

3.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների ժամանակ թվով 475 տեղամասերում գործարկվել է 1361 տեխնիկական սարքավորում:

Տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքները սկսվել են 2023 թվականի օգոստոսի 18-ից: Ստուգվել է շուրջ 1500 տեխնիկական սարքավորում և վերացվել առանձին տեխնիկական և ծրագրային թերությունները, ստուգվել են 500 անխափան սնուցման սարքավորումներ և 500 երթուղիչներ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին տրամադրվել է նաև ընդհանուր առմամբ լրացուցիչ 100 տեխնիկական սարքավորում, անխափան սնուցման սարքավորումներ և երթուղիչներ՝ անհրաժեշտության դեպքում խափանված սարքավորումները դրանցով փոխարինելու համար:

Ընտրական օրենսդրության կանոնակարգումների համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածել էր հայտարարություն էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակների՝ ըստ ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովների սպասարկման տարածքների, բաժանման և տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա ներբեռնման գործընթացը մեկնարկելու, ինչպես նաև հիշողության կրիչների տեղադրման գործընթացի իրականացման ժամկետի և վայրի վերաբերյալ:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 8 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ծրագրային ապահովմամբ կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա, ինչպես նաև պատահական ընտրանքի սկզբունքով իրականացրել է այդ կրիչներում առկա տեղեկատվության ստուգումը:

475 ընտրական տեղամասերից՝ միայն մեկ տեղամասային ընտրական հանձնաժողով է օգտագործվել մեկ տեխնիկական սարքավորում: 474 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ՝ 62-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորում, 412-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով, բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ: Պատրաստվել և հրապարակվել են տեղեկատվական բնույթի պաստառներ, հանրային իրազեկման տեսահոլովակներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը իրականացրել է տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների և ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների սպասարկման և մասնագետների աջակցման կենտրոնի թվով 32 քաղաքացիների ուսուցում և ընտրական տեղամասերում տեխնիկական սարքավորումները սպասարկող շուրջ 1400 մասնագետների ուսուցում և ստուգարք:

475 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործված 1361 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 73 տեխնիկական սարքավորման գործարկման հետ: Մասնավորապես, տարբեր տեխնիկական պատճառներով խափանվել և նորերով են փոխարինվել ընդամենը՝ 40 տեխնիկական սարքավորում, որոնցից 23-ը՝ քվեարկության նախորդ օրը, իսկ 17-ը՝ քվեարկության օրը: Առկա չի եղել որևէ դեպք, երբ ընտրական տեղամասում դադարեցվի տեխնիկական սարքավորման աշխատանքը:

Արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 475 տեղամասային ընտրական հանձնաժողովներում Ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված կարգով տպվել են տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները, ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով, իսկ քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Հարկ է նշել, որ 2022 և 2023 թվականների ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների գրանցման, պայմանագրերի կնքման գործընթացը, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների՝ ըստ ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների բաշխման գործընթացն իրականացվել է «Ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումների գույքագրման և օպերատորների գրանցման, տեխնիկական սարքավորումների և դրանք սպասարկող մասնագետների կառավարման ավտոմատացված համակարգի» միջոցով:

3.3. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Երևանի ավագանու 2023 թվականի ընտրությունների ժամանակ, Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջների համաձայն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է 9 ուղեցույց և ուսումնական ձեռնարկ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների, վստահված անձանց, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար, նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգի վերաբերյալ, ուղեցույց թույլ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրայլյան այբուբենով), ինչպես նաև առանձին հուշաթերթեր տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների համար: Նշված ուղեցույցներից 1-ը հրապարակվել է նաև օտարալեզու (անգլերեն, ռուսերեն) տարբերակով: Հրատարակվել են տեղեկատվական բնույթի պաստառներ քվեարկության կարգի, քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ: Պատրաստվել և հրապարակվել են

Երևանի ավագանու 2023 թվականի ընտրություններին նվիրված հանրային իրազեկման 4 հոլովակ:

Հարկ է նկատել, որ բոլոր ուսումնադիդակտիկ նյութերը հրապարակվելուց հետո տեղադրվել են նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում և դրանց մասին տարածվել են մամուլի հաղորդագրություններ:

Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպություններին, հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվել են ընտրական օրենսգրքեր և ուղեցույցներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անցկացրել է հանդիպումներ և քննարկումներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար առանձին ուշադրության առարկա է քվեարկության մասնակցության խթանումը: Հոլովակներից մեկը նվիրված է եղել քվեարկության մասնակցության խթանմանը:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահում կազմակերպվել է ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգ, որին մասնակցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև ընտրական գործընթացում առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ: Նմանատիպ բրիֆինգի կազմակերպման նպատակն էր իրականացնել ընտրական գործընթացի լիակատար թափանցիկության և լուսաբանման ապահովումը:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակն, ովքեր կարող են մասնակցել Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր նիստերը հանձնաժողովի կայքի միջոցով առցանց հեռարձակվում են, որի ընթացքում ապահովվում է հայերեն ժեստերի լեզվով թարգմանություն:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին, կարևորելով տեղեկատվության

հասանելիությունը, առանձնակի ուշադրություն է դարձվում Կենտրոնական ընտրական հանձաժողովի կայքի աշխատանքներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների գործունեության մասին տեղեկություններ, մասնավորապես՝ նիստերի ժամանակացույցները, բոլոր նիստերի օրակարգերը, նիստերի ուղիղ հեռարձակումը, տեսաձայնագրություններն ու որոշումները:

Կայքի միջոցով հնարավոր է ծանոթանալ ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող տվյալներին, ընտրական օրենսդրությանը, ընտրական գործընթացներին վերաբերող միջոցառումներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրված է ընտրողների ռեգիստրը՝ որոնման հնարավորությամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից հնարավոր էր հետևել ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների գործունեությանը՝ համապատասխան նստավայրերում տեղադրված տեսախցիկների շնորհիվ իրականացվող առցանց հեռարձակման միջոցով: Երևանի թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում և 475 ընտրական տեղամասերում տեղադրված են եղել տեսախցիկներ:

2023 թվականի ընտրական գործընթացների ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն՝ իր լիազորությունների շրջանակում իրականացրել է մի շարք իրազեկման միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ:

Ընտրությունների ժամանակ իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում համապատասխան հարմարեցումներ ունեցող ընտրական տեղամասերում քվեարկությունն ապահովելու նպատակով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրել է ձևավորված տեղամասային կենտրոնների մատչելիության գնահատում՝ ըստ ընդունված չափորոշիչների: Մատչելի տեղամասային կենտրոնների ցուցակը՝ կից ինտերակտիվ քարտեզով հրապարակվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում, որը հնարավորություն է տվել տեղաշարժման դժվարություններ ունեցող ընտրողներին ընդգրկվել նախընտրած մատչելի տեղամասային կենտրոնի ընտրողների ցուցակում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից քարտեզագրվել և մատչելի չափորոշիչներով գնահատվել են ձևավորված 475 տեղամասային կենտրոնները, որոնցից 183-ը համարվել են մատչելի տեղամասային կենտրոններ՝ ըստ ընդունված չափորոշիչների:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների շրջայցների և ձեռնարկած միջոցառումների արդյունքում փոխվել է շուրջ 30 տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը: Շուրջ 68 տեղամասային կենտրոններում

հնարավորություն է ստեղծվել օգտագործել մատչելի այլընտրանքային մուտքերը, երկրորդ հարկից քվեարկության սենյակները տեղակայվել են առաջին հարկում, ինչպես նաև տեղամասային կենտրոններն ապահովվել են ժամանակավոր թեքահարթակներով:

Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասում քվեարկելու հնարավորության օրենսդրական փոփոխության հանրայնացման և իրազեկման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, միջազգային գործընկերների աջակցությամբ, պատրաստվել է հատուկ անիմացիոն տեսահոլովակ, որը տեղադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում, ցուցադրվել հանրային և մի շարք մասնավոր հեռուստաընկերությունների եթերներում և տարածվել սոցիալական կայքերում:

Երևանի ավագանու 2023 թվականի ընտրություններին նախընտրական քարոզչության ընթացքում ապահովվել է նախընտրական բանավեճերի ժամանակ հայերեն ժեստերի լեզվով թարգմանություն, իսկ եթերով նախընտրական քարոզչության հետ կապված տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ընթացել են հայերեն ենթագրերով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն երաշխավորում է հավասար իրավունքներ և հնարավորություններ յուրաքանչյուրի ընտրական իրավունքն ապահովելու համար: Այս սկզբունքի իրացումն ապահովելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տպագիր և էլեկտրոնային տեղեկատվական/իրազեկման նյութերը պատրաստվել են նաև մատչելի ձևաչափով՝ (տպագիր նյութերի աուդիո տարբերակ, խոշոր տառաչափի և բրայլյան տպագրություն), ներդրվել են մատչելի քվեարկության գործիքներ (քվաթերթիկների համար նախատեսված ստվարաթղթե կաղապարներ, խոշոր և ընթեռնելի տպագրությամբ քվեաթերթիկներ): Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքը հարմարեցված է հաշմանդամության տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար՝ տառաչափի և գունային համադրության ընտրության հնարավորությամբ, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերը հեռարձակվում են ժեստերի լեզվի թարգմանությամբ, հայտարարություններն ու նորությունները ապահովված են «Տեքստից – Խոսք» համակարգով:

3.4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկատվություն կազմավորված տեղամասերի, ընտրողների թվի և քվեարկության մասնակիցների վերաբերյալ

	տեղամասերի թիվը	ընտրողների ընդհանուր թիվը	քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը	%
Ավան	23	39031	12578	32.23
Նոր Նորք	57	97501	28883	29.62
Քանաքեռ-Զեյթուն	32	56736	17005	29.97
Արաբկիր	54	94549	29299	30.99
Դավթաշեն	19	33487	10605	31.67
Աջափնյակ	52	83023	23230	27.98
Մալաթիա-Սեբաստիա	60	106323	27469	25.84
Շենգավիթ	63	110787	29367	26.51
Նորք-Մարաշ	6	10668	3314	31.06
Կենտրոն	54	94938	28726	30.26
Էրեբունի	50	89209	21716	24.34
Նուբարաշեն	5	8065	2250	27.90
Ընդամենը	475	824317	234442	28.44





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ և ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

	ընտրողներից՝ արական %	մասնակցել են, %	ընտրողներից՝ իգական %	մասնակցել են, %
Ավան	43.04	33.32	56.96	31.42
Նոր Նորք	43.08	30.66	56.92	28.84
Քանաքեռ-Զեյթուն	43.39	31.66	56.61	28.67
Արաբկիր	42.26	32.62	57.74	29.77
Դավթաշեն	44.01	34.42	55.99	29.51
Աջափնյակ	43.31	29.98	56.69	26.44
Մալաթիա-Սեբաստիա	43.44	28.24	56.56	23.99
Շենգավիթ	43.45	28.14	56.55	25.25
Նորք-Մարաշ	46.00	35.32	54.00	27.43
Կենտրոն	42.89	31.51	57.11	29.29
Էրեբունի	44.48	26.71	55.52	22.44
Նուբարաշեն	44.74	30.52	55.26	25.78
Ընդամենը	43.35	30.23	56.65	27.07



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԻ





ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ ԵՎ ՍԵՌԻ

վարչական շրջան	իգական	այդ թվում՝ նախագահ	այդ թվում՝ քարտուղար	արական	18-35	35-50	50-65	65+
Ավան	130	14	19	54	42	66	58	18
Նոր Նորք	290	26	48	166	122	157	138	39
Քանաքեռ-Զեյթուն	162	20	28	94	59	97	83	17
Արաբկիր	282	22	48	150	111	117	138	66
Դավթաշեն	107	5	18	45	37	54	43	18
Աջափնյակ	273	24	45	143	99	145	135	37
Մալաթիա-Սեբաստիա	306	21	56	174	126	188	115	51
Շենգավիթ	368	36	56	136	102	157	178	67
Նորք-Մարաշ	32	5	6	16	11	20	14	3
Կենտրոն	280	28	44	152	127	150	110	45
Էրեբունի	258	21	44	142	95	162	113	30
Նուբարաշեն	27	4	5	13	9	11	17	3
Ընդամենը	2515	226	417	1285	940	1324	1142	394

ՏԸՀ անդամներն ըստ նշանակումների



	իգական	արական	18-35	35-50	50-65	65+
ՔՊԿ	686	264	228	345	287	90
ՀԱՅԱՍՏԱՆ	495	455	250	300	287	113
ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ	648	302	228	330	288	104
ԸԸՀ	686	264	234	349	280	87


ՏԸՀ անդամներն ըստ սեռի
Նուբարաշեն
Էրեբունի
Կենտրոն
Նորք-Մարաշ
Շենգավիթ
Մալաթիա-Սեբաստիա
Աջափնյակ
Դավթաշեն
Արաբկիր
Քանաքեռ-Զեյթուն
Նոր Նորք
Ավան
0
50
100
150
200
250
300
350
400
արական
իգական


ՏԸՀ կին անդամները
իգական
այդ թվում՝ նախագահ
այդ թվում՝ քարտուղար
400
350
300
250
200
150
100
50
0
Ավան
Նոր Նորք
Քանաքեռ-Զեյթուն
Արաբկիր
Դավթաշեն
Աջափնյակ
Մալաթիա-Սեբաստիա
Շենգավիթ
Նորք-Մարաշ
Կենտրոն
Էրեբունի
Նուբարաշեն


ՏԸՀ անդամներն ըստ տարիքային խմբերի
200
180
160
140
120
100
80
60
40
20
0
Ավան
Նոր Նորք
Քանաքեռ-Զեյթուն
Արաբկիր
Դավթաշեն
Աջափնյակ
Մալաթիա-Սեբաստիա
Շենգավիթ
Նորք-Մարաշ
Կենտրոն
Էրեբունի
Նուբարաշեն
18-35
35-50
50-65
65+

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ընդ.	ԶԼՄ ներկայացուցիչների կամ դիտորդների թիվը	Իգական	Արական	18-35	35-50	50-65	65+
Զանգվածային լրատվության միջոց	28	213	106	107	116	80	14	3
Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ԶԼՄ	11	123	56	67	67	49	7	0
Տեղական դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություն	3	364	158	206	262	67	31	4
Ընդամենը	42	700	320	380	445	196	52	7





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<	Կուսակցության, կուսակցության դաշինքի անվանումը	առաջադրված	Գրանցված[9]	Հետ է վերցրել փաստա-թղթերը	Ինքնաբա-ցարկ[10]
1	ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	46	46	0	0
2	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	181	164	0	17
3	ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33	33	0	0
4	ՀԱՂԹԱՆԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	24	0	0
5	ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	48	45	0	3
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	24	0	0
7	ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	71	68	1	2
8	ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28	28	0	0
9	ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	68	65	0	3
10	ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	32	32	0	0
11	ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	50	50	0	0
12	ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33	33	0	0
13	ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	129	129	0	0
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	41	34	0	7
	Ընդամենը	808	775	1	32



[9] Ներառում է նաև ընտրված թեկնածուների թիվը
[10] Ներառում է նաև լիազորությունները վաղաժամկետ դադարած թեկնածուների թիվը

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՍԵՌԻ ԵՎ ՏԱՐԻՔԻ

		թեկնածուների քանակը, որից						
ՀՀ	Կուսակցության, կուսակցության դաշինքի անվանումը	ընդ.	ար.	իգ.	մինչև 35	35-50	50-65	65+
1	ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	46	29	17	7	25	10	4
2	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	164	106	58	44	94	22	4
3	ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33	22	11	15	15	3	0
4	ՀԱՂԹԱՆԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	15	9	5	15	2	2
5	ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45	22	23	6	15	21	3
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	14	10	3	9	11	1
7	ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	68	46	22	16	32	18	2
8	ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28	14	14	11	8	6	3
9	ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	65	40	25	12	19	30	4
10	ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	32	21	11	5	11	10	6
11	ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	50	33	17	25	18	4	3
12	ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33	21	12	16	13	4	0
13	ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	129	77	52	39	68	16	6
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	34	20	14	4	15	13	2
	Ընդամենը	775	480	295	208	357	170	40







Երևանի ավագանու 2023թ. ընտրություններին մասնակցած կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուներից ինքնաբացարկ են ներկայացրել 17-ը, որից 6 կին, 11 տղամարդ: 15 ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարել է, որից 4 կին, 11 տղամարդ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ

		մինչև քվեարկության օրը ընտրական ցուցակներում գրանցված թեկնածուներ			Առաջին բաշխմամբ ընտրված			ընտրված 2024թ. դրությամբ			Մանդատը դադարած 2024թ. դրությամբ	
<<	Կուսակցության, կուսակցության դաշինքի անվանումը	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ար.	Իգ.
1	ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	46	29	17	7	4	3	7	5	2	0	1
2	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	181	120	61	24	16	8	24	14	10	5	0
3	ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33	22	11	0	0	0	0	0	0	0	0
4	ՀԱՂԹԱՆԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	15	9	0	0	0	0	0	0	0	0
5	ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45	22	23	0	0	0	0	0	0	0	0
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	14	10	0	0	0	0	0	0	0	0
7	ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	69	47	22	14	9	5	14	9	5	1	0
8	ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28	14	14	0	0	0	0	0	0	0	0
9	ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	68	43	25	8	5	3	8	5	3	3	0
10	ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	32	21	11	0	0	0	0	0	0	0	0
11	ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	50	33	17	0	0	0	0	0	0	0	0
12	ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33	21	12	0	0	0	0	0	0	0	0
13	ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	129	77	52	0	0	0	0	0	0	0	0
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	40	22	18	12	7	5	12	9	3	2	4
	Ընդամենը	**802**	**500**	**302**	**65**	**41**	**24**	**65**	**42**	**23**	**11**	**5**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

	ընտրված 2024թ. դրությամբ			Մանդատը դադարած 2024թ. դրությամբ	
Կուսակցության, կուսակցության դաշինքի անվանումը	ընդ.	ար.	իգ.	ար.	Իգ.
ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	5	2	0	0
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24	14	10	5	0
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14	9	5	1	0
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	8	5	3	3	0
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	12	9	3	2	4
Ընդամենը	**65**	**42**	**23**	**11**	**4**





ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ԹԵԿԱԾՈՒՆԵՐԻ ՏԱՐԻՔԻ

2024թ. դրությամբ

ՀՀ	**Կուսակցության, կուսակցության դաշինքի անվանումը**	մինչև 35	որից՝ ընտրված	35-50	որից՝ ընտրված	50-65	որից՝ ընտրված	65 և ավելի	որից՝ ընտրված
1	ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	0	25	5	10	2	4	0
2	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	44	8	94	12	22	3	4	1
7	ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16	2	32	8	18	4	2	0
9	ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12	2	19	4	30	2	4	0
14	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	4	2	15	7	13	3	2	0
	Ընդամենը	83	14	185	36	93	14	16	1



3.5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Երևանի ավագանու 2023 թվականի ընտրությունների ժամանակ կազմավորված բոլոր 475 տեղամասային ընտրական հանձնաժողովների նշանակված 3.800 անդամների համար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ: Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների համար կազմակերպվել են մասնագիտական լրացուցիչ դասընթացներ:

Տարիների փորձը ապացուցել է, որ ընտրական գործընթացների որակը հիմնականում պայմանավորված է դրանում ներգրավված անձանց մասնագիտական գիտելիքների մակարդակով: Քվեարկության օրն՝ իր կարգավիճակով պայմանավորված տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց մասնագիտական գիտելիքներն անկյունաքարային նշանակություն են ունենում տվյալ տեղամասում ընտրությունների կազմակերպման ընթացքում: Ըստ այդմ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Երևանի ավագանու 2023 թվականի ընտրություններում գրանցված քաղաքական ուժերի վստահված անձանց համար ևս կազմակերպել է մասնագիտական դասընթացներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաջարկությունից օգտվելու ցանկություն են հայտնել 6 քաղաքական ուժ: Վերջիններիս՝ ընդհանուր մոտ 1700 վստահված անձերի համար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ: Հարկ է նշել, որ քաղաքական ուժերը իրենք են ընտրել դասընթացի վայրը և իրենք են գրանցել մասնակիցներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ նախապես կազմված ժամանակացույցի համաձայն ապահովել է դասընթացավարներով, ովքեր տվյալ քաղաքական ուժի ցանկալի վայրում անցկացրել են մասնագիտական դասընթաց:

4. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հետևողական է ընտրական գործընթացների թվայնացման գործում, քանի որ դրանց կիրառումը նպաստում է ընտրությունների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, ընտրական գործընթացները դարձնելով առավել թափանցիկ:

Դեռևս 2007 թվականին ներդրվել է և գործում է կորպորատիվ VPN ցանց Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների միջև՝ իր կիրառական ծրագրային փաթեթով, որն ապահովում է ընտրական մի շարք գործառույթների ավտոմատացումը:

Այժմ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներդրված են և գործում են շուրջ 15 ծրագրային համակարգեր՝ իրենց ենթահամակարգերով:

2023 թվականին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծրագրային համակարգը համալրվել է մի քանի նոր գործիքակազմերով: Նոր գործիքակազմերը կիրառվել են տեղական ինքնակառավարման մարմինների 2023 թվականին կազմակերպված բոլոր ընտրություններում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ներդրվել են միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս տեսողության հետ խնդիրներ ունեցող անձանց փոխել կայքի տառաչափը, գույները, հեռացնել նկարները և այլն: Որոշ բաժիններում հրապարակվող նյութերի հետ հրապարակվում են նաև այդ նյութի աուդիոհոլովակները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներդրվել են միջոցներ, որոնցով իրականացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի միաժամանակյա ուղիղ հեռարձակումը՝ հանձնաժողովի կայքում: Հարկ է նշել, որ համապատասխան տեսաձայնագրությունները հետագայում հրապարակվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

«Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ընտրական ցուցակների առցանց ներկայացման համակարգ»-ը համալրվե է նոր գործիքակազմով, որով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ընտրական ցուցակներն առցանց ներկայացնելուց և համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից գրանցելուց հետո առցանց Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում նաև իրենց նախընտրական ծրագրերը, կուսակցության, կուսակցության դաշինքի կազմում ընդգրկված կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագիրը, իսկ ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերն առցանց ներկայացվում են համապատասխան

ընտրական հանձնաժողով: Գործիքակազմի ներդրումը հնարավորություն տվեց ստացված տեղեկատվությունն ինքնաշխատ կերպով և ստացմանը զուգահեռ հրապարակել կայքում: Ինչ վերաբերում է ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացմանը, ապա թեկնածուները հնարավորություն են ստացել դրանք ներկայացնել առցանց՝ առաջադրող կուսակցության միջոցով կամ առձեռն՝ գրանցող ընտրական հանձնաժողով: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուները նախընտրել են իրենց հայտարարագրերը ներկայացնել առցանց:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակներն ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրելու համար ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվություն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տրամադրվող վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ:

Երևանի ավագանու 2023 թվականի ընտրություններում առաջին անգամ կիրառվեց համակարգ, որով 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակների վերաբերյալ տեղեկատվությունը դրանք տիրապետող կազմակերպությունները ներկայացրին առցանց:

Համակարգը մշակված է այնպես, որ այն կարող է նաև հանդիսանալ գովազդատու կազմակերպությունների համար իրենց տնօրինության տակ գտնվող վահանակների էլեկտրոնային գրանցամատյան: Այն հնարավորություն է տալիս նախ հաշվառել վահանակները, այնուհետև այդ տվյալները օգտագործվելու են հետագա ընտրությունների ժամանակ կուսակցություններին կամ կուսակցությունների դաշինքներին արտաքին գովազդային վահանակներ բաշխելիս:

2023թ. Երևանի ավագանու ընտրություններին նշված համակարգով արտաքին գովազդային վահանակներ տնօրինող 17 կազմակերպություններ ներկայացրել են տեղեկություններ իրենց պատկանող արտաքին գովազդային վահանակների 2879 կողմի վերաբերյալ:

Տեղեկատվություն արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների կողմից ներկայացված վահանակների կողմերի վերաբերյալ

Կազմակերպության անվանումը	վահանակների կողմերի քանակը
«ԱԴՎԵՐՍԻԹԻ» ՍՊԸ	11
«ԱՈՒԹԴՈՐ ԷՖԵԿՏ» ՍՊԸ	217
«ԳՐԻՆ ՎԵՅ ԹՐԵՎԼ» ՍՊԸ	4
«ԷԳԱ» ՍՊԸ	56
«ԷՅ ընդ ՎԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	5
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ	75
«ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	4
«ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲԸ	35
«ՆՈՒՇԻԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՍՊԸ	73
«ՍԱՐԿԱՆՍ» ՍՊԸ	920
«ՍԻՏԻ ՍԱՅՆՍ» ՍՊԸ	34
«Վ.Վ. Արտ Դիզայն» ՍՊԸ	18
ԱՅՍԻ ՍՊԸ	1325
ԲԻ ԲԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	13
Գալլերի ՍՊԸ	1
Իմիջ Մ.Գ. ՍՊԸ	84
ՊԻԿԱՍՍՈ ՕՕՀ	4
Ընդամենը	***2879***

Տեղեկատվություն արտաքին գովազդային վահանակների վերաբերյալ ըստ վահանակների տեսակների

Վահանակի տեսակը	կողմերի քանակը
Հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով արտաքին գովազդային վահանակ	342
Հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված արտաքին գովազդային վահանակ	217
Վերելակներում տեղակայված արտաքին գովազդային վահանակ	2245
Մետրոպոլիտենի տարածքում տեղակայված արտաքին գովազդային վահանակ	75
Ընդամենը	***2879***



Տեղեկատվություն արտաքին գովազդային վահանակների վերաբերյալ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների

Վարչական շրջան/համայնք	մեծ 5 քառ. մ. արտաքին վահանակ	Կանգառ	Վերելակ	Մետրոպոլիտեն
Աջափնյակ	24	0	104	0
Ավան	19	24	213	0
Արաբկիր	41	33	174	18
Դավթաշեն	26	6	152	0
Էրեբունի	28	21	116	0
Կենտրոն	57	24	313	12
Մալաթիա-Սեբաստիա	57	21	572	0
Նոր Նորք	7	26	331	0
Նորք-Մարաշ	1	1	0	0
Նուբարաշեն	4	6	1	0
Շենգավիթ	43	24	141	45
Քանաքեռ-Զեյթուն	33	31	114	0
Փարաքար	1	0	0	0
Նշված չի	1	0	14	0
Ընդամենը	342	217	2245	75



Գովազդատու կազմակերպությունների կողմից առցանց ներկայացված տեղեկատվությունն ինքնաշխատ կերպով հասանելի է դառնում «Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ընտրական ցուցակների առցանց ներկայացման համակարգ»-ում, որը այդ նպատակով 2023 թվականին համալրվեց ևս մեկ նոր գործիքակազմով: Հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի հայտերը այլևս կարող են ներկայացնել առցանց՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցվելուց և օգտահաշիվ ստանալուց հետո:

Համակարգի միջոցով Երևանի ավագանու ընտրությունների գրանցված 13 կուսակցությունները և 1 կուսակցությունների դաշինքը ներկայացրել են իրենց հայտերը՝ արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար:

Ընտրական գործընթացների թվայնացման հաջորդ նորամուծությամբ ներդրվել է համակարգ, որը հնարավորություն է տվել 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված արտաքին գովազդային վահանակներն ընտրություններին մասնակցող կոսակցությունների միջև բաշխել ծրագրային ապահովմամբ: Այս գործիքակազմն առաջին անգամ կիրառվեց Երևանի ավագանու 2023 թվականի ընտրությունների ժամանակ:

Ընտրական գործընթացների թվայնացման ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում տեղեկատվական համակարգերի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներքին ցանցի կիբերանվտանգությանը:

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2023թ. սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու հերթական ընտրությունների կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն է իրականացրել մեկ միջազգային կազմակերպություն՝ Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը (ԵԽ ՏՏԻԿ) 14 դիտորդով և մեկ օտարերկրյա հասարակական կազմակերպություն՝ Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական հարթակը՝ 10 դիտորդով:

Այցելուի կարգավիճակով հավատարմագրվել, տեղամասային ընտրական հանձնաժողովներ են այցելել, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին են հետևել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների 37 և օտարերկրյա ընտրական մարմինների 43 ներկայացուցիչներ:



Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հրապարակած զեկույցում, ընդհանուր առմամբ, Երևանի ավագանու հերթական ընտրությունների վարչարարությունը գնահատվել է արհեստավարժ, արդյունավետ և թափանցիկ՝ բոլոր ժամկետների պահպանմամբ: Զեկույցը հատկապես կարևորում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակված լրացուցիչ և ավելի մասնագիտացված վերապատրաստման ծրագրերը: «Ոմանք (Կոնգրեսի զրուցակիցները) նաև բարձր են գնահատել ԿԸՀ-ի՝ երկխոսության և փոփոխությունների համար բաց լինելը, այդ թվում՝ Ընտրական օրենսգրքի հաջորդ փոփոխությունները և գործնական բարելավումների ներդրումը, ինչպիսիք են՝ ցուցակների էլեկտրոնային գրանցման նոր ծառայությունները (նաև գովազդային վահանակների և հայտարարագրերի համար)»: [11]

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախաձեռնել է երկու միջազգային կառույցների անդամակցության գործընթաց: 2023 թվականին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ընտրական մարմինների համաշխարհային ասոցիացիայի (A-WEB) ժամանակավոր անդամի կարգավիճակ է ստացել: Հանձնաժողովին Ասոցիացիայի լիիրավ անդամի կարգավիճակ կշնորհվի 2024 թվականին: A-WEB-ը ժողովրդավարության և ընտրությունների վարչարությանը օժանդակող նշանավոր միջազգային կառույց է, որին անդամակցում է աշխարհի 111 երկրի 121 ընտրական մարմին:

2023 թվականին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը անդամակցել է «Կանայք ընտրական վարչարարության մեջ» (Women in Electoral Management) միջազգային ասոցիացիային, որի նպատակն է ընտրական վարչարարության բոլոր մակարդակներում խթանել կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը:

[11] CPL(2023)45-02 https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=0900001680acf49c

6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:»:

2023 թվականի հունիսի 12-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ որոշում՝ ստորագրված 66 քաղաքացու կողմից, և կից փաստաթղթեր:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու կամ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար կազմավորվում է առնվազն 25 քաղաքացուց բաղկացած նախաձեռնող խումբ:»:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 2023 թվականի հունիսի 20-ի թիվ 14-Ա որոշմամբ գրանցել է Ազգային ժողովին «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով կազմավորված նախաձեռնող խումբը, նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ է գրանցել Արամ Ռազմիկի Պետրոսյանին և Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով ստորագրությունների հավաքման համար 60-օրյա ժամկետ է սահմանել 2023 թվականի հունիսի 21-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 19-ը ներառյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախաձեռնող խումբը գրանցելուց հետո իր համացանցային կայքում տեղադրել է տեղեկատվություն՝ նախաձեռնող խմբի, նրա լիազոր ներկայացուցչի, նախաձեռնող խմբի էլեկտրոնային հասցեի վերաբերյալ, նախաձեռնող խմբի կողմից առաջարկվող օրենքի նախագիծը և տեղում ստորագրությունների հավաքումը կազմակերպելու ձևաթերթիկի էլեկտրոնային տարբերակը՝ ներբեռնման հնարավորությամբ:

ԿԸՀ կայքում տեղադրվել է առցանց՝ էլեկտրոնային եղանակով նախաձեռնությանը միանալու ձևաթերթիկի ստորագրման և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների էլեկտրոնային նույնականացման համակարգը: Համակարգի միջոցով նախաձեռնությանը քաղաքացին կարող էր միանալ մեկ անգամ: Այս եղանակով նախաձեռնությանը միացել են 810 քաղաքացի:

Նախաձեռնող խմբի կողմից 2023 թվականի օգոստոսի 31-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել ստորագրահավաքի արդյունքում հավաքված ստորագրությունները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մշակվել և ներդրվել է համակարգ, որով ստորագրահավաքի թերթիկների վրա լրացված քաղաքացիների տվյալները մուտքագրվել և համադրվել են այդ ժամանակահատվածում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ընտրողների ռեգիստրի հետ, որը տրամադրվել էր ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից: Հարկ է նշել, որ այդ գործընթացն իրականացվել է Երևանի ավագանու 2023 թվականի ընտրությունների կազմակերպմանը զուգահեռ:

Ստուգման համար մուտքագրվել են 57 067 անձի տվյալներ, որոնցից միանշանակ նույնականացվել են 49 796: 7213 քաղաքացու տվյալները չեն համընկել ընտրողների ռեգիստրի տվյալների հետ, 51 քաղաքացու տվյալներ կրկնվել են, իսկ 7 քաղաքացու տվյալներ կրկնվել են էլեկտրոնային եղանակով ստորագրահավաքին միացած քաղաքացիների տվյալների հետ: Էլեկտրոնային եղանակով ստորագրահավաքին միացած քաղաքացիների տվյալների ընտրողների ռեգիստրի հետ համադրման արդյունքում վավեր է ճանաչվել 804 ստորագրություն:

Արդյունքում համակարգն արձանագրել է, որ տեղում կազմակերպված ստորագրահավաքներին և էլեկտրոնային եղանակով ստորագրահավաքին միացած քաղաքացիների վավեր ստորագրությունների թիվը կազմում է 50 600: Ինչի հիման վրա 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 66-Ա որոշմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատել է նախաձեռնող խմբի՝ Ազգային Ժողովին օրենքի նախագիծ ներկայացնելու համար «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, պահանջվող քանակի ստորագրությունների վավերականությունը: